- չհավաքել հատակին ընկած սրածայր գործիքները մերկ ձեռքերով. օգտագործել մագնիս, ունելի, ձեռնոց և այլն:

Բուժօգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում վնասվելու վտանգը սկսվում է ասեղների և բժշկական սրածայր գործիքների օգտագործման պահից և ավարտվում է միայն դրանց խոտանումից հետո:

Բժշկական օգնություն ցուցաբերելիս մաշկի, լորձաթաղանթների ցանկացած վնասումը և կենսանյութով աղտոտումը պետք է դիտարկել որպես հնարավոր շփում վարակային հիվանդության հարուցիչի հետ և իրականացնել անհետաձգելի կանխարգելիչ միջոցառումներ:

ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍՐԱԾԱՅՐ ԳՈՐԾԻՔՈՎ ՎՆԱՍՎԵԼԻՍ

- Վնասված մակերեսն անհապաղ լվանալ հոսող ջրով և օճառով, շարունակելով պահել հոսող ջրի տակ մի քանի րոպե կամ մինչև արյունահոսության դադարումը՝ վերքից արյան ազատ արտահոս ապահովելու համար:

  Հոսող ջրի բացակայության դեպքում կարելի է օգտագործել ֆիզիոլոգիական լուծույթ:
- Չի կարելի՝
  - սեղմել կամ շփել վնասված մակերեսը,
  - վերքից արտածծել արյունը,
  - օգտագործել ուժեղ ազդող միջոցներ (սպիրտ, յոդ):

Անհետաձգելի միջոցառումներ արյամբ կամ այլ կենսահեղուկով չվնասված մաշկի աղտոտման դեպքում

- Անհապաղ լվանալ աղտոտված մակերեսը:

  Հոսող ջրի բացակայության դեպքում կարելի է օգտագործել ֆիզիոլոգիական լուծույթ:
- Չի կարելի՝
  - սեղմել կամ շփել աղտոտված մակերեսը,
  - օգտագործել ուժեղ ազդող միջոցներ:

Ցայտացրում աչքի մեջ

- անհապաղ լվանալ աչքը ջրով կամ ֆիզլուծույթով, լվանալիս ժամանակ առ ժամանակ կոպերը զգուշորեն բարձրացնել, որպեսզի դրանց տակ նույնպես լվացվի,
- եթե կան կոնտակտային ոսպնյակներ, դրանք հանել միայն աչքերը լվանալուց հետո,
- չի կարելի աչքերը լվանալ օճառով կամ ախտահանող լուծույթով:

Ցայտացրում բերանի մեջ

- անհապաղ թքել բերանն ընկած հեղուկը:
- բերանը ողողել ջրով կամ ֆիզլուծույթով և նորից թքել, կրկնել ողողումները մի քանի անգամ,
- չի կարելի ողողման համար օգտագործել օճառ կամ ախտահանող լուծույթ:

Վթարային իրավիճակների մասին անհապաղ տեղեկացրեք բուժհիմնարկում վարակի հսկողության պատասխանատուին՝ ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնություն և խորհրդատվություն ստանալու համար:

Հիշե՛ք, բժշկական օգնության համար դիմած ցանկացած մարդ կարող է լինել արյան միջոցով փոխանցվող վարակների հարուցիչներով վարակված: Ձեր անվտանգությունը կախված է ձեզանից: Մշտապես իրականացնելով նախազգուշական միջոցառումներ և կիրառելով անհատական պաշտպանական միջոցներ՝ կխուսափեք վարակումից:

Վիրուսային հեպատիտ Բ-ով վարակվելուց խուսափելու հուսալի մեթոդ է պատվաստումը:

Կանխատեսված վտանգը կիսով չափ կանխված է:

ՀՀ ԱՆ «Ներհիվանդանոցային ինֆեկցիաների կանխարգելման գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ

Վաճառքի ենթակա չէ Not for sale



Ինչպես խուսափել արյան միջոցով փոխանցվող վարակներից